ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ АРМЯНСКОЙ ФИЛОЛОГИИ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF ARMENIAN PHILOLOGY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

52ª Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia

(+374 10) 54-43-91/94,95,96/1-37, armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ 8

ԵՊՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝ 2024 Թ. ՀՈՒՆԻՍԻ 27 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2023-2024 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի ավարտական աշխատանքների պաշտպանության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը:
2. Առկա և հեռակա ուսուցման 2023-24 ուստարվա բակալավրիատի մանկավարժի որակավորման ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահի հաշվետվություն:
3. Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի տարեկան հաշվետվություն:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 32 անդամներից նիստին մասնակցում է 24-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, դոց. Ա. Գալստյանը ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ բ. գ. թ. Սաթենիկ Ավետիսյանին, որն ընթերցեց իր հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2023-24 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 14 ուսանող: Չորս ուսանող ստացել է 19 միավոր, մեկ ուսանող՝ 18 միավոր, երկու ուսանող՝ 17 միավոր, երեք ուսանող՝ 16 միավոր, երկու ուսանող՝ 15 միավոր, մեկ ուսանող՝ 14 միավոր, մեկ ուսանող՝ տասնմեկ միավոր:

«Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 8 ուսանող: Մեկ ուսանող ստացել է 20 միավոր, մեկ ուսանող՝ 16 միավոր, երկու ուսանող՝ 14 միավոր, մեկ ուսանող՝ 15 միավոր, մեկ ուսանող՝ 11 միավոր, մեկ ուսանող՝ 10 միավոր, մեկ ուսանող՝ 9 միավոր:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունն անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել:

Պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքներն ընդհանուր առմամբ բավարարում էին ներկայացվող պահանջները: Նրանցում հիմնականում պահպանված էին կառուցվածքային և տեխնիկական պահանջները:

Պաշտպանության ընթացքում ուսանողները ներկայացրին իրենց ավարտական աշխատանքներին վերաբերող լուսապատկերային ցուցադրություններ:

Պաշտպանության ներկայացված աշխատանքներում, ըստ գործող կարգով սահմանված պահանջի, նշված էին աշխատանքի նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը: Վերջում ներկայացվում էր համապատասխան գրականությունը:

Պաշտպանությանը մասնակցած ուսանողներն ընդհանուր առմամբ ունեին անհրաժեշտ մակարդակի գիտելիքներ, կարողանում էին ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, պատասխանել հանձնաժողովի հարցերին: Ներկայացված աշխատանքները վերաբերում էին տարբեր խնդիրների: Կային նաև մի քանի ոչ հաջող պատասխաններ, որոնք ցածր գնահատականներ ստացան: Որոշ աշխատանքներում կար թեմայի համակարգային ընկալման խնդիր, առանձին դիտարկումներն այդպես էլ ընդհանրական եզրակացությունների չէին հանգում: Աշխատանքների մի մասը չուներ կայուն մեթոդաբանական հիմք, հաճախ մեթոդի մասին գիտելիքները սխալ էին կամ չհամակարգված: Ցանկալի է, որ ուսանողները ծանոթ լինեն ուսումնասիրվող թեմայով ստեղծված ամբողջ գրականությանը և քննական վերաբերմունք ունենան առաջադրված խնդիրներին, հայտնեն իրենց դիրքորոշումը, ինչը կբարձրացնի հետազոտության ինքնուրույնության մակարդակը: Որոշ աշխատանքներում քննական-վերլուծական մոտեցումը առաջադրված խնդիրներին նկատելիորեն քիչ էր, դրանք ավելի շատ նկարագրական բնույթ ունեին: Բանավոր խոսքը երբեմն համարժեք չէր կատարված գրավոր աշխատանքին: Ցանկանում եմ ավարտական աշխատանքներ ղեկավարող դասախոսների ուշադրությունը հրավիրել այս հանգամանքին:

Ներկայացված աշխատանքների ընդհանուր որակը վկայում էր, որ համապատասխան ամբիոններն իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով:

Ամփոփելով կարելի է նշել, որ պաշտպանությունն անցավ պատշաճ մակարդակով: Պահպանված էին ընթացակարգային պահանջները, որը վկայում է ֆակուլտետի դեկանի և դեկանատի աշխատակիցների լավ աշխատանքի մասին:

Օրակարգի 2-րդ հարցի հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, դոց. Ա. Գալստյանը ձայնը տվեց 2023-24 ուստարվա բակալավրիատի մանկավարժի որակավորման ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահ բ. գ. թ. Սաթենիկ Ավետիսյանին, որն ընթերցեց իր հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2023-24 ուստարում հայ բանասիրության ֆակուլտետում առկա ուսուցմամբ բակալավրիատի՝ մանկավարժի որակավորման ավարտական ամփոփիչ քննություն է հանձնել 64 ուսանող, իսկ հեռակա ուսուցումից՝ 5 ուսանող:

Առկա ուսուցումից 20 միավոր գնահատվել է տասնյոթ ուսանող, 19 միավոր՝ ինը ուսանող, 18 միավոր՝ տասներեք ուսանող, 17 միավոր՝ յոթ ուսանող, 16 միավոր՝ երեք ուսանող, 15 միավոր՝ վեց ուսանող, 14 միավոր՝ երկու ուսանող, 13 միավոր՝ մեկ ուսանող, 12 միավոր՝ երեք ուսանող, 11 միավոր՝ մեկ ուսանող, 10 միավոր՝ երկու ուսանող: Հեռակա ուսուցման բաժնից 19 միավոր գնահատվել է մեկ ուսանող, 17 միավոր՝ մեկ ուսանող, 15 միավոր՝ մեկ ուսանող, 12 միավոր՝ մեկ ուսանող, 9 միավոր՝ մեկ ուսանող:

Քննությունն ընթացել է գործող ընթացակարգին համապատասխան: Քննական հարցատոմսերից յուրաքանչյուրը ներառում էր երեք հարց: Առաջին հարցը վերաբերում էր մանկավարժությանը, երկրորդը՝ հայոց լեզվի կամ հայ գրականության դասավանդման մեթոդիկային, իսկ երրորդ հարցը գործնական բնույթի էր. պահանջվում էր ներկայացնել հայոց լեզվի կամ գրականության որևէ դասի վարում: Ուսանողները հիմնականում լավ էին պատրաստվել: Երրորդ՝ գործնական հարցին պատասխանելիս մեծ մասը ներկայացրեց նաև լուսապատկերային ցուցադրություն:

Քննությանը մասնակցած ուսանողների մասնագիտական գիտելիքները ընդհանուր առմամբ համապատասխանում էին պահանջվող մակարդակին: Քննված ուսանողները հիմնականում կարողանում էին ներկայացնել քննատոմսի հարցերի պատասխանները, պատասխանել հանձնաժողովի լրացուցիչ հարցերին:

Ուսանողների պատրաստվածության ընդհանուր որակը վկայում էր, որ ուսումնառության ընթացքում մանկավարժական կրթաբլոկի դասընթացները հիմնականում արդյունավետ են կազմակերպվել: Թե՛ մանկավարժության, թե՛ դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ ուսանողների հիմնական մասը համապատասխան գիտելիքներ ուներ, թեև եղան նաև ոչ լիարժեք պատասխաններ: Երբեմն ուսանողները ներկայացնում էին տեսական նյութը, բայց դժվարանում էին դրանք հիմնավորել անհրաժեշտ օրինակներով, ընդգծել դասավանդման մեթոդաբանական առանձնահատկությունները: Առավել հաճախ դիտարկվում էր մասնագիտական նյութի կամ թեմայի չիմացություն կամ անհրաժեշտ գիտելիքի պակաս: Այս առումով ցանկանում եմ հրավիրել համապատասխան ամբիոնների ուշադրությունը, որպեսզի ուսուցման ընթացքում ավելի մեծ տեղ հատկացվի տեսական և գործնական հմտությունների համալիր զարգացմանը:

Ընդհանուր առմամբ քննությունը հաջողությամբ անցկացվեց, պահպանվեցին ընթացակարգային պահանջները:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ ֆակուլտետի դեկան դոց. Ա. Գալստյանը ձայնը տվեց նիստին ներկա հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ բ. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյանին, ով ներկայացրեց ամբիոնի տարեկան հաշվետվությունը: Պրոֆ. Ա. Աբաջյանը իր խոսքում մասնավորապես նշեց.

Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնում այժմ իրենց գիտակրթական գործունեությունն են իրականացնում 13 անդամներ՝ 2 պրոֆեսոր /մեկը՝ հրավիրյալ/, 7 դոցենտ և 4 ասիստենտ /հունվարին ՀՀ-ից այլ երկիր են տեղափոխվել Ա. Խաչատրյանը և Մ. Բոցինյանը/: Ամբիոնն ունի 2 առկա ասպիրանտ, որոնցից մեկն արդեն ավարտեց ուսումնառությունը, 1 հեռակա ասպիրանտ և 4 հայցորդ:

Ինչպես հայտնի է, սույն ուսումնական տարվանից սկսած՝ «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» մագիստրոսական կրթական ծրագիրն անցել է մեկուկեսամյա ուսումնառության ժամանակահատվածի, որն անշուշտ ինչ-որ չափով դյուրին է դարձրել ուսանողների աշխատելու հնարավորությունը:
Ուսանողներին հատկապես հետաքրքրում են գրաբարի ուսուցման խորացմանը նպաստող հայագիտական ուղղություններին և համակարգչային լեզվաբանությանը, հատկապես ավտոմատ թարգմանությանը վերաբերող կամընտրական դասընթացները: Կրթական մեր ծրագրի ընթացքում դասավանդումն անցկացվում է պատշաճ մակարդակով, դասախոսությունները և գործնական ժամերն ընթանում են համապատասխան տեսադիտողական նյութերի մատուցմամբ:

Ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, ընդհանուր լեզվաբանության հիմնահարցերի ուսումնասիրությամբ, այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքով:

2023թ. նոյեմբերին 2-ին ամբիոնը հավուր պատշաճի կազմակերպեց լուսահոգի Աշոտ Սերգեյի Աբրահամյանի «Իրականություն, լեզվագիտակցություն, նշան» գրքի շնորհանդեսը, որը լույս էր ընծայել ԵՊՀ հրատարակչությունը: Միջոցառմանը մասնակցում էին հանրապետության տարբեր գիտակրթական կենտրոնների գիտնականներ, դասախոսներ, Աբրահամյան ընտանիքի անդամներ, հարազատներ, ուսանողներ և այլք: Հնչեցին տարբեր ելույթներ, մեծարվեց Ա. Աբրահամյանը՝ որպես նշանագիտության մեջ անուրանալի ներդրում ունեցող գիտնական:

Նոյեմբերի 22-ին կայացավ «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական 4-րդ գիտաժողովը և «Հուշարձան Մանուկ Աբեղյանին» գրքի շնորհանդեսը /կազմող Ա. Աբաջյան/: Բացման խոսքում ԵՊՀ ռեկտորը նշեց, որ մեծանուն հայագետը մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի իբրև համալսարանի, ինչպես նաև մեր գիտության կաճառի՝ ԳԱԱ հիմնադիր անդամ: Եվ «Հուշարձան Մանուկ Աբեղյանին» ժողովածուն գնահատանքի, արժևորման յուրահատուկ առհավատչյա է՝ ուղղված մեծ գիտնականին:

Տեսաուղերձով համալսարանականներին ողջունեց Մանուկ Աբեղյանի գերմանաբնակ միակ շառավիղը՝ նրա ծոռ Սուրեն Աբեղյանը՝ իր խորին շնորհակալությունը հայտնելով իր և իր մոր՝ երջանկահիշատակ Հասմիկ Աբեղյանի անունից, ում խնդրանքով ու մտահղացմամբ էլ գլուխ է եկել աշխատությունը: Այն լույս է ընծայվել Սուրենի մեկենասությամբ:

Գիտաժողովում ելույթ ունեցան պրոֆ. Ժ. Քալանթարյանը, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի թումանյանագիտության բաժնի ղեկավար Եվա Մնացականյանը, Գոհար Չարենցը:

Հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողները ներկայացրին գիտության, մշակույթի անվանի գործիչներ Անտուան Մեյեի, Հ. Օրբելու, Հ. Շիրազի, Ա. Իսահակյանի, Վ. Թոթովենցի, Ս. Զորյանի, Դ. Դեմիրճյանի խոսքերը Աբեղյանի մասին՝ մեծերը մեծի մասին:

Գիտաժողովում իրենց զեկուցումներով հանդես եկան Ա. Աբաջյանը, Ն. Դիլբարյանը, Բ. Ներսիսյանը, Զ. Աղաջանյանը, Ս. Ավետյանը, ինչպես նաև լեզվաբաններ հանրապետության այլ բուհերից:

2024թ. գարնանը «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն» հանդեսը հատուկ թողարկմամբ հրատարակեց «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական 4-րդ գիտաժողովի նյութերը, որի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում ԵՊՀ ղեկավարությանը և հրատարակչությանը:

Ամբիոնի ջանքերով անցկացվող, ավանդական դարձած «Լավագույն գրաբարագետ» օլիմպիադան այս տարի յուրահատուկ էր իր ընդգրկման սահմաններով, նպատակով ու տեսակով: Ամբիոնն այս անգամ համագործակցեց «Իրական դպրոց» կրթական հիմնադրամի, Արարատյան հայրապետական թեմի և մեր ֆակուլտետի ՈՒԳԸ-ի հետ: «Դասական լեզու հայոց» դպրոցականների համար կազմակերպված մրցույթի մեկնարկը տրվեց 2023թ նոյեմբերին՝ պաշտոնապես ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատվելուց հետո: Այս մրցույթի նպատակը թե՛ գրաբարի ուսուցանումը, արժևորումն ու տարածումն էր, թե՛ մայր բուհ-դպրոց կապի սերտացումը: Մրցույթին մասնակցել են 170-ից ավելի աշակերտներ Երևանից և հանրապետության յոթ մարզերից: Նրանք նոյեմբերից մարտ աշխատել են դպրոցներում՝ ուսուցիչների ղեկավարությամբ: Մրցույթն անցկացվել է եռափուլ ձևաչափով: Առաջին երկու փուլերում ստուգվել է աշակերտի՝ գրաբարով նյութի ընթերցանությունը: Վերջինը նվիրված էր նախագծային ուսուցմանը, որի շրջանակում աշակերտները գրաբարով ստեղծել էին տարբեր նախագծեր՝ կոմիքսներ, հեքիաթներ, շարժանկարներ, տեսանյութեր, բազմաբովանդակ պատկերներ: Վերջնարդյունքներն ամփոփվեցին մարտի 4-ին հայ բանասիրության ֆակուլտետում: Հաղթողներ ճանաչվեցին հանրապետության տարբեր դպրոցների աշակերտներ 10 անվանակարգերում: Նրանք «Ինստիգեյթ» և «Բուտեխ» ընկերությունների կողմից արժանացան պարգևների՝ դրամական մրցանակներ, սալիկային համակարգիչներ՝ հայկական արտադրության, գրքեր, պատվոգրեր և այլն:

2024թ. մարտի 27-ին անցկացվեց «Գրաբարը՝ որպես արդի հայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» հանրապետական գիտաժողովը գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորման եռամյա գիտական հետազոտությունների շրջանակում /խմբի ղեկավար՝ Ա. Աբաջյան, անդամներ՝ Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Ս. Կարապետյան/: Հայերենի բառապաշարի զարգացմանը, տերմինաշինությանը, դրանցում գրաբարի ունեցած վիթխարի դերին ու նշանակությանը նվիրված տարբեր զեկուցումներով հանդես եկան Ա. Աբաջյանը, Ս. Գրիգորյանը, Ն. Պարոնյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Կարապետյանը, Կ. Միքայելյանը, Ա. Գալստյանը, Հ. Զաքարյանը, Հ. Մեսրոպյանը և ասպիրանտ Վ. Բարսեղյանը: Հայ բանասիրության ուսանողներներն էլ հանդես եկան մեր ոսկեդենիկ գրաբարն արժևորող իրենց ելույթներով: Գիտաժողովի նյութերը նորից հատուկ թողարկմամբ հրատարակվել են «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն» հանդեսի առանձին պրակով՝ այս անգամ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ:

Ամբիոնը ակտիվ մասնակցություն է ունեցել դիմորդների համար ԵՊՀ- ի կազմակերպած առարկայական ամենամյա օլիմպիադայի 2 փուլերի անցկացման աշխատանքներին, որին, պետք է հատուկ նշեմ, մեծապես օգնել են նաև մեր ուսանողները:

Ապրիլի 15-ին հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված անվանի լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանի 100-ամյակին: Գիտնականի կյանքին

և գիտական վաստակին նվիրված զեկուցմամբ հանդես եկավ Ա. Աբաջյանը, զեկուցում կարդաց նաև գերմանացի հայագետ Մատթեոս Ֆրիտցը, ում հետ ամբիոնը համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերել: Ոչ բոլորին էր հայտնի Ա. Մարգարյանի՝ բանաստեղծ լինելու մասին: Իսկական անակնկալ էր մեր ուսանողուհիների ասմունքը՝ ընտրված նրա «Սրտի փշուրներ» գրքույկից:

Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի աշխատակիցները մասնակցել են նաև այլ գիտակրթական կենտրոններում կազմակերպված գիտական միջոցառումների, հիշատակենք դրանք:

Ենոք Գրիշկյանը «Չինարենը որպես մետալեզու և նրա կիրառման առանձնահատկությունները» թեմայով զեկուցում է կարդացել ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի կազմակերպած հանրապետական գիտաժողովում՝ նվիրված հայագիտության հարցերին և միջմշակութային հաղորդակցությանը /15.11.2023/:
Ս. Ավետյանը զեկուցմամբ հանդես է եկել Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած «Ջահուկյանական ընթերցումներ» գիտաժողովին: Վ, Պետրոսյանը՝ Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ միջազգային գիտաժողովին՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ծննդյան 110-ամյակին- /15-16 նոյեմբերի, 2023/: Ն. Դիլբարյանը մասնակցել է «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած միջազգային գիտաժողովին, Խաչատուր Աբովյանի անհետացման 175 -րդ տարելիցին նվիրված հանրապետական գիտաժողովին /կազմակերպիչներ՝ ՀՀ ԳԱԱ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ԵՊՀ, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան, Հայաստանի գրողների միություն/, որտեղ զեկուցում է կարդացել «Խաչատուր Աբովյանի գրաբարագիր ժառանգության լեզվա-բանասիրական քննություն» թեմայով: Խ. Աբովյանի տուն-թանգարանի կայքում զեկուցման թեմայով տեսանկարահանում է զետեղվել:

Ս.Գրիգորյանը 2024 թ. մայիսի 6-13-ը Ավստրիայում և Գերմանիայում մասնակցել է «Համագործակցային գործընկերությունը ծնողների և տարբեր տարիքի երեխաների ուսու-ցիչների միջև» և «Միջմշակութային համագործակցությունը եվրոպական կրթական միջա-վայրում» սեմինարներին, փետրվար-մարտ ամիսներին՝ Ամերիկյան դեսպանատանը կա-յացած «Միջմշակութային հաղորդակցության զարգացումը» թեմայով վերապատրաստմանը և Գավառի պետական համալսարանի 27-րդ միջազգային գիտաժողովին /04. 05. 2024/:

Ուսումնակրթական գործընթացին զուգահեռ՝ ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակաշրջանում ծավալել են գիտահետազոտական բեղուն գործունեություն՝ հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակելով գիտական 28 հոդված, 1 ժողովածու /Ա. Աբաջյան «Հուշարձան Մանուկ Աբեղյանին» 322 էջ/, 3 գրքույկ /Ն. Դիլբարյանը գրաբարից արդի արևելահայերենի է փոխադրել և երեք գրքույկով տպագրել Խաչատուր Աբովյանի՝ գրաբարով գրված գործերը՝ 1. Խաչատուր Աբովյան, Աղոթարան, 2. Խաչատուր Աբովյան, Զատկական քարոզ, 3. Խաչատուր Աբովյան, Սա կոչում եմ այժմ և այսուհետ, մինչև օրերը հավիտենական՝ Հայաստան/:

Հրատարակման շեմին է «Գրաբարը՝ որպես արդի հայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» կոլեկտիվ մենագրությունը /370 էջ/:

Հաշվետվության վերաբերյալ ելույթ ունեցան, բ. գ. դ., պրոֆ. Ա. Մակարյանը, բ. գ. թ., դոց. դոց. Ա. Տեր-Մինասյանը, Ա. Ջրբաշյանը և այլք: Նշվեց, որ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնը կատարել է մեծ և արդյունավետ աշխատանք գիտակրթական գործունեության կազմակերպման առումով: Խորհուրդը ամբիոնի կատարած աշխատանքը գնահատեց բարձր:

Ընթացիկ հարցերում՝

1. **ԼՍԵՑԻՆ –** ՀՀ ԲԿԳԿ- ի կողմից ֆինանսավորվող գիտական թեմայի շրջանակում կատարված «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» աշխատությունը (հեղինակներ՝ բ. գ. դ., պրոֆ. Ա. Աբաջյան, բ. գ. թ., դոց. դոց. Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Ս. Կարապետյան, խմբագիր՝ բ. գ. թ., դոց. Գ. Մխիթարյան, գրախոսներ՝ բ. գ. թ., դոց. Ս. Գրիգորյան, բ. գ. թ. Ա. Կարապետյան): տպագրության երաշխավորելու հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանը, Ալ. Մակարյանը, դոց. դոց. Թ. Տոնոյանը, Ռ. Էլոյանը, Ս. Ավետյանը և ուրիշներ:

Նշվեց, որ աշխատությունը հեղինակային խմբի երկար ու նվիրումով աշխատանքի արդյունք է: Այն վերաբերում է հարուստ տերմինային համակարգ ունեցող գրաբարին և ուսումնասիրում, նաև գնահատում է գրաբարի բառապաշարի հարստության աստիճանը՝ ըստ նրանում կիրառվող եզրույթների քանակի, որակի, իմաստային դրսևորումների: Ըստ այդմ՝ գրաբարի բառապաշարը քննվում է տարաբնույթ իմաստային-թեմատիկ խմբերով, որոնք վերաբերում են կրոնական, ռազմաքաղաքական, հասարակական, իրավական բնագավառներին: Ուսումնասիրված են 12 հեղինակ և աղբյուր՝ աստվածաշնչյան թարգմանությունից մինչև քերթողահայր Մովսես Խորենացի, մինչև Գ.Նարեկացի և Խ.Աբովյան՝ ըստ էության, գրաբարի ամենաճոխ, ամենադասական և ամենաօրինակելի բնագրերը: Աշխատանքը հիրավի արժեքավոր է, սպասված, դրա կարիքը մեծապես կար հայագիտության մեջ:

ՈՐՈՇԵՑԻՆ – «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» աշխատությունը երաշխավորել տպագրության:

2. **ԼՍԵՑԻՆ –** ԵՊՀ՝ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հեռակա ասպիրանտ Հասմիկ Հակոբյանի՝ «Միջտեքստայնությունը արդի հայ արձակում» (գիտական ղեկավար՝ բ.գ.թ. դոց. Ա. Ջրբաշյան) թեման «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2024» մրցույթին մասնակցելու երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Ալ. Մակարյանը, դոց. դոց. Ա. Գալստյանը, Մ. Ֆալակյանը, Ռ. Էլոյանը, Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

Նշվեց, որ մրցույթն անցկացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարի՝ 2024 թ. հունիսի 7-ի N 1005-Ա/2 հրամանի: Առաջարկվող թեման միջգիտակար-

գային է և բազմաընդգրկուն, բազմակողմանի ուսումնասիրության նյութ է և կարևոր ներդրում կլինի արդի հայ գրականագիտության ոլորտում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ասպիրանտ Հասմիկ Հակոբյանի՝ «Միջտեքստայնությունը արդի հայ արձակում» թեման երաշխավորել մասնակցելու «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2024» մրցույթին:

3. **ԼՍԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ Անի Պետրս-Բարցումիանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիրը որոշակի փոփոխությունների ենթարկելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ:- Պրոֆ. պրոֆ. Ա. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Զրբաշյանը, Վ. Եղիազարյանը և այլք:
Նշվեց, որ Ա. Պետրս-Բարցումիանի ատենախոսության թեման՝ «Գրական միստիֆիկացիայի ֆենոմենը ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ (Ս. Կիսինի (Մունի) ստեղծագործության նյութի հիման վրա)», նպատակահարմար է փոխել «Գրական միստիֆիկացիա. հիմնախնդիրները և մարմնավորումը ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ» թեմայով (գիտական ղեկավար՝ բ.գ.թ., դոց., Ա. Զրբաշյան), քանի որ աշխատանքում միստիֆիկացիայի դրսևորումները ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ ներկայացված են բավական հանգամանալից, իսկ Ս. Կիսինի ստեղծագործությունը քննվում է այդ համատեքստում՝ իբրև դրա մասնավոր արտահայտություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Ա. Պետրս-Բարցումիանի ատենախոսության թեմայի հետևյալ վերնագիրը՝ «Գրական միստիֆիկացիա. հիմնախնդիրները և մարմնավորումը ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ» (Ժ. 01. 04.):